# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 110-Ա**

**25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թ.**

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՅՈՒՆԻՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման և հաշվի առնելով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում առաջարկվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի արոտավայր հողատեսքի 0,04301 հեկտար /կադաստրային ծածկագրեր՝ 09-082-0045-0003/ հողամասը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ էներգետիկայի օբյեկտների հողեր գործառնական նշանակությամբ՝ ՀԷԿ-ի կայանային հանգույց կառուցելու համար:

2. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման

միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործը:

**Կողմ ( 10 )՝**

**ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ**

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ**

**ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ**

**ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ**

**ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ**

**ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ**

**ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ**

**ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ**

**ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ**

**ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ**

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **ՆԱՐԵԿ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**

*2018 թ* *սեպտեմբերի* *26*
*ք. Կապան*